



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ ՈՒ Ն

23 ապրիլի 2018 թվականի N 80-Ա

ՄԵՐԻ ԳԱՆԴԱԼՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի 1-ին մասով՝

Կ ա Ր Գ ա Դ Ր Ո Ւ Թ Ե Մ.

1. Աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մերի Գանդալյանին 2018 թվականի ապրիլի 24-ից 26-ը ներառյալ գործուղել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն՝ Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանի 2018-2019 ուսումնական տարվա ընդունելության գործընթացին առնչվող քննարկմանը մասնակցելու նպատակով:

2. Գործուղման ծախսերը կատարել Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի N 2335-Ն որոշմամբ սահմանված կարգով:

3. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ. Գանդալյանին՝ գործուղումից վերադառնալուց հետո, եռօրյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին ներկայացնել գործուղման արդյունքների վերաբերյալ հաշվետվություն:

Կից՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության 2018թ. ապրիլի 20-ի N ՊՆ/510-ԱԴ-52 գրությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

 Վ. ՀԱԿՈՒՅԱՆ



2018թ. ապրիլի 23
ք. Կապան